կորիձէ երգիչը մատնկցելու է այդ ներկայացմանը։

—

Ստացանք ,ՄՕՍԿՎԱՑԻՑ, մի անյայտ հայ պարտից, 100 ռուբլ յօգուտ Թիւրքայ Հայաստանի հայ սովամահներին։

—

ՌՈՒԹԱՑԻՍԻՑ գրում են, որ ամենեղ կրկին հրդեհ է պատռել։ Բաւական չատ ապրանքներ այրվեցան։ Քիչ էր մնում խարազովի թատրոն էլ այրվեր։ Շատ խանութներ կրակի զոհ եղան։

—

Պ. Ալէքսանդր Միրզաջանի պատկերահանդէսը, որ գանվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Շիրվի տանը և որի մուտքից ստացված արդիւնքը նշանակվում է յօգուտ վանի սովամահներին, բաց կը լինի մինչև 1 յունիսի։ Հրաւիրում ենք թիֆլիսցիներին այցելել այդ ուշագրութեան արժանի և գեղեցիկ պատկերահանդէսը։ Մուտքը 20 կոպէկ արժէ։

—

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը ազնէն բացված է։ Խնդրում ենք նրանց, որոնք կամենում են գրվել մեր լրագրին 6 ամսով, չուռով հասցնել փոստը «Մշակի» խմբագրութեանը

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Բրէդլա պատգամաւորի գործը շարունակվում է։ Նօրտամպտանի մէջ ահագին ժողովրդական միտինգ է եղել, որտեղ Բրէդլաի ընտրողները համակրութիւն յայտնեցին իրանց ընտրածին։ Միտինգի վճռով ուղարկեցաւ շնորհակալութեան ուղերձ Գլադստոնին, Բրայտին և Լարուշէրին, որոնք պարլամենտի մէջ պաշտպանեցին Բրէդլաի իրաւունքները։

Անգլիական հասարակական կարծիքը և լրագրութիւնը վրդովված են համայնքների ժողովի մեծամասնութեան դէմ, որովհետև մեծամասնութիւնը ցոյց տուեց որքան անհամբերող է դէպի անհատական հաղորդումներ։ «Times» լրագիրը պահանջում է որ Գլադստոնի մինիստրութիւնը տեսի եռանդով գործի և պահանջի որ Բրէդլաի խնդիրը նորից վերանայվի պարլամենտում։ Լրագիրը խորհուրդ է տալիս, որ նոր օրէնքի ծրագիր առաջարկվի, որով երդումը կը յայտնվի մի քաղաքական և ոչ թէ կրօնական գործողութիւն։ Զարմանալի չէ, որ այն երկրում, որտեղ կայ քաղաքական ազատութիւն, դեռ ևս քաղաքական երդում չը կայ։

Բրէդլաի իր վերջին ճառի մէջ, որ նա ասեց համայնքների ժողովի առջև իր ընտրողական իրաւունքները պաշտպանելու համար, յայտնեց մտաւորապես հետևեալ միտքը։ «Ասում պահանջում էք, որ նա երդվում մի որ և է կրօնական գրքի վրա, բայց մինչև ժամանակ դուք պահանջում էք, ի հարկէ, որ երդումը լինի ոչ թէ միայն մի դատարկ ձև, այլ լինի խոսք յայտնութիւն, անկեղծ մի գործողութիւն։ Բայց ես կեղծաւորել չը գիտեմ։ Ինչ գին կունենայ թէ ձեզ, և թէ ազգի համար, որի ներկայացուցիչն եմ ես, եթէ ես երդվեմ այն գրքով, որին չեմ հաւատում։ Ես երդմանը տուի մեծ նշանակութիւն եմ տալիս և չեմ կարող կեղծաւորկերպով երդվել։ Դուք խօսք թոյլ էք տալիս, որ անգլիական եկեղեցու անդամը իր ձևով երդվի, կամ օրէնքի կամ բողոքական իր ձևով, և չէք ստիպում, օրինակ, որ կամ օրէնքը երդվի այն ձևով, որով երդվում է հրէան և այն, ուրեմն ինչի իմ համոզմունքի մարդկանց ստիպում էք երդվել կրօնապէս, երբոր դուք ինքներդ ինձ անհաւատ էք անվանում։ Ես երբէք ձեր առջև բացարձակապէս չեմ յայտնել որ ես անհաւատ եմ, այլ պահանջել եմ միայն որ ինձ թոյլ տրվի քաղաքականապէս երդում տալ։ Բայց ինչքան էլ բարձր լինէք ձեր մէջ նստելու, պարլամենտի անդամ լինելու պատիւը, ես նրան չեմ գնի կեղծաւորութեան գնով։»

Բրէդլաի լուրջ կերպով նայում է երդման վրա, երդումը հանաք չէ, և նրան չէ կարելի տալ մի դրքի վրա, կամ մի ձևով, որին ինքն երդվողը չէ հաւատում։ Նա ասում է, երդում պէտք է տալ այն ձևով, որին ինքն մարդը հաւատում է, եթէ ոչ նա իր խղճմտանքի մէջ իր տուած երդումը անգործնական կը համարի, ուրեմն խնդրանքս սուտ երդում կը տայ։

Լրագիրները ասում են որ Գլադստոն դիտաւորութիւն ունի առաջարկել պարլամենտին նոր օրէնք երդման մասին, իսկ եթէ այդ օրէնքը չի ընդունվի, այն ժամանակ Գլադստոն դիտաւորութիւն ունի հաւատարմութեան քուէ առաջարկել համայնքների ժողովին։ Եթէ ժողովը հաւատարմութեան քուէ չի տայ նրան, այն ժամանակ Գլադստոն հրաժարական կը տայ իր պաշտօնից։

Վերջին լրագիրները հաղորդում են, որ երբ Բրէդլաին պարլամենտը չը թոյլ տուեց իր ձևի երդում տալ, այսինքն հասարակ կերպով յայտնել իր հաւատարմութիւնը ազգին, ճշմարտութիւնը և թագուհուն, առանց յիշելու Աստուծու կամ Քրիստոսի անունը, այն ժամանակ Բրէդլաը պահանջից որ նրան թոյլ տրվի կրօնական երդում տալ, ինչպէս և բոլոր միւս պատգամաւորներին։ Բայց այդ էլ չը թոյլ տուեց նրան պարլամենտը, այն ինչ Բրէդլաի պէս անհաւատներից շատերին պարլամենտը թոյլ է տալիս կրօնական երդում տալ, չատ լաւ էլ գիտենալով որ երդվողը չէ հաւատում իր տուած երդմանը։ Ուրեմն պարլամենտը պահանջում է կեղծաւորութիւն երդման մէջ։

Բոլոր լրագիրները ասում են, որ Բրէդլաի գործի հետևանքը այն կը լինի, որ Անգլիան ստիպված կը լինի մտցնել քաղաքական երդում։ Բրէդլաը շատ անգամ վկայ է եղել անգլիական դատարաններում, և նրան թոյլ էր տրվում կրօնական երդում չը տալ։ Եւ նոյնիսկ պարլամենտը անգլիկաններից չէ պահանջում երդման մէջ այն, ինչ որ պահանջում է օրինակ կաթոլիկներից։ Կաթոլիկները պապին հնազանդութիւն են յայտնում երդման մէջ, բողոքական ազանդներից շատերը «երդվում եմ բառը յանցանք են համարում տալանել, հրէաները Քրիստոսի անունը չի հարիւ չեն արտասանում երդման մէջ, ուրեմն միայն էր միայն թոյլ տալ Բրէդլաի պէս մարդուն որ նա իր երդման մէջ Աստուծու անուանը չը յիշէր։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

—

Աթէնքից «Голосъ» լրագրին գրում են հետևեալ թղթակցութիւնը յունիսի 14-ից.

Բերլինի կոնֆերենցիայի բացվելու օրվայ մոտենալը շտապացոյց հետաքրքրում է Աթէնքի հասարակութեանը, որի ուշադրութիւնը այժմ բացառապէս դարձրած է Բերլինից, Լոնդոնից և Փարիզից ստացված լուրերի վրա։ Այդ լուրերը երբեմն ուրախացնում են յոյներին, յոյս տալով, որ Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը կը պաշտպանեն հելլենական կառավարութեան պահանջները Նախնեան Ցունաստանի հետ միացնելու մասին, երբեմն տխրեցնում են նրանց այն մտածմունքները, թէ արդեօք Բիւրքիան կը կատարի կոնֆերենցիայի վճիռը և արդեօք դեռ երկար պէտք է սանձվին թիւրքայ զազանութիւններից Թեսալիայում և Էպիրոսում բնակվող յոյները։ Թիւրքայ կառավարութիւնը զայրացած անգլիական քաղաքականութեան նոր ուղղութիւնից, նախատանալով այդ երկու նահանգների կորուստը, բոլոր միջոցներ գործ է դնում, որ թէսալիայի և Էպիրոսի էրիստոնեայ բնակիչներից ատելի իր վրէժը։ Այդ նահանգներից ստացված նամակներից երևում է, որ տեղական քրիստոնեաների դրութիւնը անտանելի է. ոչ թէ միայն նրանց պատիւն և զոյքին, այլ և նրանց կեանքին վտանգ է սպառնում։ Ամենայն օր այդ նահանգներից զաղթում են Ցունաստան ամբողջ ընտանիքներ, որպէս զի կարողանան ազատվել թիւրքերի տուած տանջանքներից։ Դժուար և կրիտիկական ժամանակների մէջ են ապրում թէ այդ երկու նահանգի թիւրքերից հարստահարված յոյները և թէ ազատ Ցունաստանի բնակիչ նրանց եղբայրակիցները։ Ինչպէս առաջինները, նոյնպէս և երկրորդները անհամբերութեամբ սպասում են այն օրվայ արշալոյսի ծագելուն, որ յաւիտան պէտք է ազատել սարսիկներին և միացնել նրանց խրանց ազատ եղբայրակիցների հետ։

Այն համակրութիւնը, որով ընդունվեցաւ յոյների թագաւորը Ֆրանսիայում և Անգլիայում ուրախացնում է նրա հպատակներին, որոնք այդ ընդունելութիւնը բարեյաջող են համարում Ցունաստանի ծագելու համար։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 16/28 յունիսի

Վերջապէս Հայկական խնդիրը եւրոպական հարցի մը կերպարանք առած է և ընթացակից է յունական և Մոնթենեգրոյի խնդրոց, և եթէ ո և է կերպով զանոնք լուծելու հնար մը լինի, յուսամք թէ մերն ալ գոցա շնորհիւ քիչ չատ գոհացուցիչ վիճակ մը ստանայ։ Ա. այժմ մեր ժողովուրդը մեծ խանդի մէջ է, և ցոյց կուտայ որ եթէ զլխով դատարկ ենք, գէթ սրտով լեցուն ենք։

Վեց տէրութեանց ծանուցագրին երկու կէսերուն կրաւորականութիւնը պատասխանեց, բայց հայոց խնդրոյն վերաբերեալ մասին տակաւին ո և է պատասխան չը տուաւ։—Ինչ պիտի ըլլայ իւր պատասխանը, լուրերն բաւական տարբեր են։ Նախ արտաքին գործոց նախարար Ապէտտին բաշայի ծրագիրը կայ որ է Հայաստան և Քիւրդիստան (ինչպէս իրենց կուսեն) երեք մեծ գաւառներու բաժնել, լիազօր երեք տաճկի կառավարիչներ ընտրել և ազատերանացման գրութեամբ կառավարել։ Այս ծրագիրը մեզ ընդունելի չը կրնար ըլլալ, զի վարչութիւնը միշտ խլամ կը մնայ և հայ տարրը փճացնելով թիւրքին գրդռացնելու քաղաքականութիւնը կը շարունակէ։—Կիսմանամ նաև թէ եւրոպական տէրութիւններէ ոմանք չեն ուզեր որ Անգլիան բարեկարգութեանց պատասխանատու արեւելքի մէջ մեծ ազդեցութիւն ձեռք բերէ, հետևապէս Հայաստանի բարեկարգութիւնը բոլոր տէրութեանց պաշտպանութեամբ լինել կուզեն, խորհուրդ ունենալով միանգամայն ամէն գաւառի գլուխ մէկ մէկ ազգէ եւրոպացի կառավարիչ ընտրել կամ եւրոպական պաշտպանութեամբ կառավարութիւն մը։ Այս լուրը թէպէտ Աւստրիոյ դեսպանատունէն տարածուած է, սակայն որ ատենան ստոյգ վիճակը չենք գիտեր։ Բայց Բ. Դուռը պիտի ուզէ իւր իշխանութիւնը այսպէս ջնջուել։

Հայաստանի համար դեսպանք կազմակերպութեան մասնաւոր օրէնքներ (սթանիւ օրկանիք) պիտի պահանջեն. այս լուրն ալ տեղւոյն ֆրանսերէն թերթերու մէջ կարդացինք. անշուշտ մեզ համար ամենէն ասելի խնդրելի ծրագիրներէն մին է, և թէ մեր ախորժելովը գործը լմնար։

Բայց Բ. Դուռը ինչ կուզէ ընել. ընդհանրապէս խօսուածը հետևեալն է։ Մինչազգային յանձնաժողով մը կայ որ Թուրքիոյ եւրոպական գաւառաց համար վարչական կազմակերպութեան ծրագիրներն կը պատրաստէ. կառավարութիւնը պիտի առաջարկէ որ այդ ծրագիրներն բարեփոխելով հայրական գաւառաց համար ալ գործադրուի։ Մեք չատ զոհ պիտի լինէինք եթէ եւրոպական Թուրքիոյ համար պատրաստուած կազմակերպութիւնը, որ ինքնավարութեան չատ տարբեր կը պարունակէ, Հայաստանի համար ի գործ դրուէր։ Բայց Բ. Դուռը որ միջազգային յանձնաժողովոյ ազնաւութիւններն դժուարացնելու համար ամէն դիմադարձութիւն կը յարուցանէ և չուզեր որ գործ մը տեսնեն, մեզ հաւանական չը թուեր որ ուզեսայ Հայաստանի համար նորա ազնաւութիւնները օգուտ բաղել։ Խնդիրն այս ձագաղ վիճակին մէջն է։ Ինչ գործ կը տեսնեն եւրոպա եղող մեր դիւանագէտ պատուիրակներն,— բացարձակ գաղտնի։ Թէպէտ և կերեի թէ իրենց ջանքց նպատակն միայն Հայաստանը չէ, այլ բարձրատիճան նախարարի մը վերատին թիւրքայ գործոց գլուխ անցնելուն համար ազնաւութեան իրենց յատակագծէն օգուտ վնելու չէ։ Եթէ Ցունաստանի համար փոքրագութիւն կերազեն այդ մարդէն, ազատ են, բայց հայոց համար նորա վերադարձը աղետաբեր լինելուն երկիւղը ունինք։

Հայաստանէն եկած լուրերն միշտ ցաւալի են, բայց հոս մեր թշնամիներն կը տարածանեն թէ ամենք սխալ են և թէ հայոց հնարներն են որպէս զի Հայաստանի դրութիւնը ոչ ազգի ցոյց տան, և մեր պատրիարքարանը կը պարտաւորի հայ և ֆրանսերէն թերթերու միջոցաւ ծանուցանել պաշտօնապէս թէ ինչն ամենայն վաւերական գրերով ապացուցած է Հայաստանի անմխիթարական կացութիւնը։ Այս պաշտօնական յայտարարութիւնը լաւ ազդեցութիւն ունեցաւ։

Սովոյ մասին կը կարդանի թէ քիչ չատ հունձքերն աղէկ ելլան այս տարի, սակայն միմիայն հիմա վիճակին խեղճ է։ Մեր բողոքական եղբարք որ նիւթապէս կոգնեն Հայաստանի ազնն և կախարանեն այս մասին, մէկ օր մը սուրբ պատեցին մասնաւորապէս Հայաստանի տառապանաց համար աղօթելու։ Շատ սրտաբուխ էր իրենց այս գործը և զմեզ բոլորվին յուզեց. թող լսեն ինչ որ կուզեն, հայրենեաց մեծ դաղափարը, կրօնական ո և է նախապաշարումներէ ազատ, օրըստօրէ կը թափանցէ կրօնիւք պատատեալ հայոց մէջ և նոցա միութեան կապը կը լինի։ Թող ցաւին, թող որ բան որչափ որ կուզեն նորա, որք կը քարոզեն թէ-արատաբոյ հայաստանեայց եկեղեցւոյ հայրենասիրութիւն չը կայ հայոց համար։ Ժամանակը իրենց-մէ զրաւոր է։ Ուրեմն ալ ի Կ. Պոլսոյ քրիստոնեայ ժողովրդոց վրայ խոր տպաւորութիւն մը ըրաւ նկերէսէ պատրիարքի Ռօպերթի զարոյցին առուած այցելութիւնը։ Այդ վարժարանը մարդասէր ամերիկացւոյ մը, Ռոպերթի, շնորհիւ հաստատուած է Կ. Պոլիս. չատ բարեկարգ վարժարան մէ և գիտութիւններն թուրքիոյ մէջ տարածող առաջին և ամենէն կանոնաւոր հիմնարկութիւնն է. տեսութիւնը ամերիկայի բողոքականաց յանձնուած է, աշակերտք հայ և պուլկար են, հաստատ կրթութիւն մը կառնեն. լուսաւորական և բողոքական հայ աշակերտք միով են միմեանց հետ, ընկերութիւն կազմած են և կաչխատեն իրր հայ առանց ոչ և է խորութեան։ Երբ սրբազանը այցելութիւն կուտայ, վարժարանի մէջ զարմանքը կը տիրէ. միսիոնարք, դասատու աշակերտք ամենքը կապէն, առաջին անգամն է որ քրիստոնեայ ժողովրդի մը պատրիարքը այցելութիւն կուտայ բողոքական հիմնարկութեան մը, և գործանքը կապացուցանէ թէ քրիստոնական բաժանմանց մէջ խորութիւն չը գոնե և խղճի ազատութիւնը կը յարգէ։ Ուրախութիւնին մեծ կըլլայ, պատարագ կարգի փառաւոր ընդունելութիւն կընեն, սրբազանը պէտք եղած յորդորները կը կարդայ աշակերտաց, և գեղեցիկ վիշտակ մը ձգելով ամենուն սրտին մէջ կը մեկնի։

Պ. Ազգար Ցովհաննիսեանց դեռ Կ. Պոլիս է սիրալիր ընդունելութիւն կը գտնէ. պիտի մեկնի երկու օրէն. չատ կաշխատի դերասաններ և գեղասանուհիներ պատրաստելու Տֆիխիսի համար։ Ցեմ գիտեր թէ դերասանուհի գտած է, բայց կարծեմ պ. Մենկանենի հետ պայմանագիրը կնքած է։ Ասեն մը կ. Պոլսոյ դերասաններն Տֆիխիսը աւեռաց երկիր մը կը նկատէին. Ազամեանի գտած ընդունելութիւնը իրենց համար չատ հրապուրել էր. բայց նորա վերջի դիրքերը իրենց եռանդը և զեղեցիկ տեսնելու փափագը չափաւորեցին։ Պ. Ազգար նաև չատ փափագ ունի Տֆիխիսի գրքերի հրատարակութեան ընկերութեան համար կ. Պոլիս միտքեր հաստատել. թէ ինչ բրաւ իր նպատակին հասնելու համար յարգոյ նամակաւ կը հաղորդեմք։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԴԻԱՍԿ, 25 յունիսի։ Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի ներկայութեամբ «Փիվարիաս» նաւը ջուրն է իջեցրած։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի։ «Прав. Вѣстн.» հաղորդում է, որ Լիւվադիին նշանակվում է Պետական Խորհրդի անդամ և Թագաւոր Ալեքսանդրի Նաւատորմի զլխաւոր։ Ծովային մինիստրութեան կառավարչի օգնական Պէշչուրով նշանակվում է Ծովային մինիստրութեան կառավարիչ։

Կ. ՊՕԼԻՍ, 25 յունիսի: Լրագրիները սատանյան թիւրքաց կառավարութիւնից մահմեդական մոլեռանդութիւնը զրգռելու թղթաւորութիւնը: Եւ այդ էլ կատարւում է: Մամուլը առաջարկում է բաց անել մարգարէի գրչակը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 229 ր., երկրորդ 223 ր. 50 կ., արևելեան առաջին 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 37 կ., ոսկի 7 ր. 73 կ.: Թուղթ մի բուրլ Լոնդոնի վրա արժէ 25,56 պենս, ռուբլոյ 100 բուրլ համբուրգի վրա արժէ 218 մարկ 75 պֆ.: Բորսայի արամագրութիւնը շատ հանգիստ է:

ՐԱՖՈՒԶԱ, 26 յունիսի: Չէրնոգորցիները, թողնելով իրանց բոլոր զիրքերը Դուլցինոի մոտ, առաջացան դէպի Տուզա և Պոդգորիցա: Դիսկէի թիւրքերի և քրիստոնեաների մէջ կռիւ է եղել: Մի քանի թիւրքեր սպանվեցան:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՌԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մասերի քրտնքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անուանվ, ծախվում է եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մոտ: Գլխաւոր դէպոն Ֆիլիպի Նեռրոյ Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆ դեղատան մէջն է գտնվում, վարչվայում, Լիլիկտորգնի փողոց, № 35: Գալմանինի մեծ արկղիկը արժէ վարչվայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է ըստ գրչանաց խարտիաներից:

12—25 վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլէոգրաֆիական պատկերներ 20% զեղջուկ մովերարիներ 6—0 ր., խոզանկարներ պատվիճեմատ դրված են լրի մէջ առանձնայն և անգլիական խանութի համար, ամենայնայն ածելիներ, արկղիկով 4 ր., նեմիլրդի գանակներ 3—20 ր. գրիչներ, բրիտանական մետալի թէլ.ամանեներ 30 կ.,—3 ր., դիրտաամպենգիա, թիւրքական շերբեթի և ծխարաբ Բոգեցնող նիւթ 70 կ., ամենայնայն պատվիչներ և խերեռ 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Համեմատելով անգլիական խանութի թէլերի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆրանսի համար այն թէլերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆիրմայով բուրլիանց թէլերը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէլերի հետ:

22—100

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիջակ 5 ր., ՊՊՏԵՂ է ԳԱՅԼՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամբակյա, պարսատիկ, տրիկո, դրապ, փոսար թաղի, թաւիշ կարասիքի և կտաքերի համար, կարենոր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ հանվեց մեբարաներ, կոնֆիտներ հազի դէմ, պարիր, մազդեղվա, ամանեներ, կարբոլյան փոշի, սապոն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱԼԻԱՆ գիներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

20—20

ПО СЛУЧАЮ СЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъэтажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлевзнъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля 2¾ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала — 5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

2—3

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԼԻՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գ ո ր ա լ ե վ ի շ ներքին հ., Ռ ա ս ի ն ա ն ց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Ն ո ե ն մ ր օ ր ս կ ի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկովիչ խիրուրգիական հ., Վ ա ր օ վ վիներական և բոցագի հ., Բ ա ֆ ս ի աչքի հ., Բ ա խ ա ն օ վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կ ր ա ս ն օ գ լ ե ա գ օ վ, Լ ի ս ի ց ե վ և Վ ե ր մ ի շ ե վ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուգվ օ վ ա կ ի ներքին հ., Ն ո ե մ ր օ ր ս կ ի վիներական և կաշու հ., Ա ա ռ ա ա ծ ա տ ա ս ր օ վ կանանց հիւանդութիւններին:

Հինգշաբթի. Վ ա ր օ վ վիներական և բոցագի հ., Ռ օ տ ի ն ե ա ն ց կանանց և երեխաների հ., Լ ի ս ի ց ե վ և Վ ե ր մ ի շ ե վ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մ ի ն կ ո վ ի չ խիրուրգիական հ., Կ ր ա ս ն օ գ լ ե ա գ օ վ և Լ ի ս ի ց ե վ ներքին հ., Բ ա խ ա ն օ վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Ն ո ե մ ր օ ր ս կ ի և Ա ա ռ ա ա ծ ա տ ա ս ր օ վ վիներական և կաշու հ., Բ ա ր ա յ ե վ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բ ա ր օ վ կուրծքի հ., Ե ա ն կ օ վ ս կ ի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ ա ր օ վ բժշկանոցի մէջ ընդունում է անփարձ ագքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեան Օրբելա ագքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կերակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԲՐԱԺՇՇԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԻԼԻՄՈՐ ՊԱՀԵՍՏ

Ի Ի Ի Հ Ե Ն Ր Ի Թ Ա Յ Ի Մ Ե Ր Մ Ա Ն Ի.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇԱՅԱ ՄՈՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերում ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒՐԱԿՆԵՐ 2½ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՈՑՆԵՐ (սիլեկեր) 50 կ., 1½ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿԼՆԵՐ 2½ ր., 5½ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Չին խոլայական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ՋՈՒՐԱԿՆԵՐ փոքր զիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Ջութակի լարեր (թիքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԻ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: Վիոլոնչելներ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիոլոնչելի չկոլա 4 ր.: ԿՈՆՏՐԱԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի չկոլա (թիքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՖԻՏԻՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ֆիտարի չկոլա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տետրակը: ՄԱՆԿՈՒԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չկոլա 3 ր.: Ամենալաւ իտալական լարեր այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր.. 6 ր.: Սուրբին կանիֆոլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՈՆՈՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալվող պիտակներ մոմակալներով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՈՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գարմոնիայի չկոլա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իւրաքանչիւր տետրակը: ԿՕՐՆՈՊԻԱ-ՊԻՈՍԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Չկոլա (թիքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏՅՈՐՆ, ՆՇՆԱԿԱՓՈՒԼԵՐ, ՏՐՈՄՊԵՏՆԵՐ, ՖԼԵՅՏՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ. Չկոլա (թիքնուսուցիչ) 1½ ր., և 3 ր. Նոտաներ 40 կ., 1½ ր., 3 ր. իւրաքանչիւր տետրակը: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կլարնետի չկոլա 4 ր., Բեկոլո, Զամանի, Ֆլաուտչեատներ: Աֆզիական ԿՕՆՑԵՐՏԻՆՈ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Չկոլա 3 ր., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1½ ր., Գերմանական կոնցերտինո 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Չկոլա (թիքնուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ., և 1 ր. իւրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՏԳԱՐՄՈՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՈՆՆԵՐ ՖԼԵՅՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր.: ԳԱՐՄՈՆՆԵՐ ՖԻՐՄԻ ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԱԿ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ թաչուների համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, լիռաներներ, բուն-չուկներ, բանգոներ, մետալական չրթուսիներ բեկներ, եռանկիւններ, զարմանելի և այլն:

Ստամբուլից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշգրտութեամբ: Ճանապարհածախսը գնողին է: Ծախսվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Ծախվում են ԸՆԿՈՒՆԵԼՈՒԹ լաւ շինված ՊԱՀԱՐԱՆՆԵՐ (չկոմներ) իրանց բոլոր յարմարութիւններով: Կարելի է տեսել ամենայն օր Սօրօկայ, տուն իշ. Սուվրաաօվի, Վարշավսկայա պիկարնիա:

5—5 (2)

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱՍԿԱՅԱ ՊԻԿԱՐՆԻԱ-ՅԻՆ կից կը բացվին ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՈԿՈԼԱԴ, ԹԷԱ և պատրաստված հանգիստի զանազան ՋՐԵՐ:

5—40

ՎԵՐԶՆԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՊՈՒՄ

Հրացաններ, բեմբիլներ, գանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

13—20

Մամուլի տակից գուրս եկաւ և վաճառվում է Զաք. Դրիգորեանցի «Ազգասէր» գրավաճառանոցում Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (Հարենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զեղջուկ կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մատեմատիկական) և Բնական և ընդ. Աշխ. Դ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակեն նոցա գները: Ստար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисѣ Кавказская книжная торговля З. П. Грикурова.

13—20

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ **„Сборника свѣдѣній о Кавказѣ“**, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 27 Іюня 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона